

ՄՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(ՏԵՄ ԴԷՂ 15)

ԵՐԿՐԱԳՐՈՒԹԻՒՆ, ՊԱՐՏԻՋԱԳՐՈՒԹԻՒՆ, ԱՅԿԵԳՐՈՒԹԻՒՆ,
ՄԵՂՈՒԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ, ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ, ԽԱՇՆԱՏԱԾՈՒԹԻՒՆ
ՆԻ ՀՍԻԱՐՈՒԾՈՒԹԻՒՆ¹.

ԵՐԿՐԱԳՐՈՒԹԻՒՆ. — Յարդ ստորագրած Երևանու նահանգին այս գաւառը կրնանք աւելի կերպով երկրագործական տեղ անուանել. վասնզի բնակիչքն երկայն ատենէ ի վեր իրենց ուշադրութիւնը երկրագործութեան վրայ դարձուցած են, թէպէտ շատ առաջ չին գացած անոր մէջ: Աստ գետինը բնական զօրութիւն մը ունի, այսինքն, որ և է պարարտացուցիչ միջոցներու կարօտ չէ. և արդէն իսկ բնակչաց մեծամասնութիւնը արտերու պարարտացուման և ոչ զաղափարը ունի: Սակայն այժմ Որդաւատու բաժնին մէջ արտոց պարարտութիւնը անհրաժեշտ դարձած է, վասնզի՝ թէ՛ երկրին քանակութիւնն սակաւ լիւնելով և թէ՛ տգիտարար մշակուելով՝ գետինն յետին աստիճանի աղքատացած է: Թէ և ստորագրուած վիճակաց մէջ՝ միանգամայն առնելով՝ բաւական քանակութեամբ երկիր կայ, բայց այդ երկրի մեծ մասն բոլորովին անգործ կը մընայ՝ յետին աստիճանի ջրոյ պակասութեան համար: Տօթագին գոտայն մէջ՝ միջին հաշուով իւրաքանչիւր ծովքը վեց—խաւովար երկրի բաժին ունի. այսինքն է, այնչափ երկրի կտորի մը մշակութիւն՝ որոյ վրայ սովորաբար իրը 150 պուղ ցորեն կրնայ ցանուիլ: Ուստի պարզապէս նայելով կարելի է կարծել թէ երկրի այդչափ կտոր մը բաւական և նոյն իսկ շատ ալ է շինականի մը համար. բայց համառօտ դիտողութիւն մը բնեւոր՝ բոլորովին ուրիշ բան կը տեսնեմք: Վասնզի ինչպէս արդէն ըսուեցաւ, առհասարակ ստորագրած տեղեացս բնակիչք՝ աղքատցած գետնայն նախկին բարեբերութիւնը վերադարձնելու համար՝ ամենեւին պարարտացուցիչ միջոցներու չեն գիմեր. անոր համար երկրին իւրաքանչիւր ուրողւած մասն երկու կամ երեք տարի անգամ մը կը սերմանեն. հետեւապէս տարուէ տարի բովանդակ երկիրն հերկելու տեղ՝ միայն երրորդ մասն կը մշակին: Անոռոգ տեղեր՝ անգամ մը ցանուած երկրի մասն՝ փոխանակ երեք տարւ.

1. Սոյն նիւթին վրայ գրած է մանրամասնօրէն նաեւ պր. Սպասկէյն, զոր նախ յիշեալ Հաւաքածոյից մէջ (հտ. Բ. Դ'էջ 167-93) և ապա առանձին տետրով մ'ալլ հրատարակեց հետեւեալ մակագրով. «Երևանու գաւառի մասին՝ 1870 տ. մին՝ գիւղատնտեսական և քաղաքագիտական տեղեկութիւններ»:

ւոյ՝ վեց տարի կը հանգչի⁽⁸⁾։ Ըստ այսմ վեց խալվար երկրի տէր գեղջուկ մը տարուէ տարի երկու խալվարը միայն կը սերմանէ, որ իրեն պիտոյից անբաւական է․ անոր համար իւր աշխատանքէն նախանձեղի արդիւնք մը չ'ուենհար։ Հետեւեալ հաշիւը կը ցուցնէ մերձաւորապէս թէ շինականը ինչ շահ կ'ընէ՝ իրեն ոռոգեալ արտերէն։ Առնունք օրինակի համար տասնպուղ⁽⁹⁾ տեղ մը, այսինքն է, այնչափ երկրի կտոր մը՝ որոյ վրայ սովորաբար տասն պուղ ցորեան կը սերմանուի։ Այդ երկիրը մշակել տալու համար պէտք է առ նուազն 3 րուբլի վճարել, իսկ անոր սերմը 5 րուբ. կ'արժէ, իւրաքանչիւր պուղին վրայ 50 կոպէկ գնելով․ սերմանոցն իւր աշխատութեան համար առ նուազն 40 կոպէկ կ'առնու։ Ոռոգման համար՝ որ ըստ ցորենի աճման ժամանակին՝ չորս անգամ կը կատարուի, չորս գործաւոր հարկաւոր է, որոց իւրաքանչիւրն առ նուազն 30 կոպ. պէտք է ընդունին, որ 1 րուբ. 20 կոպ. կ'ընէ․ հնձոց ժամանակ 8 գործաւոր կարեւոր է՝ իւրաքանչիւրին 50 կոպ. որ է 4 րուբլի։ Շեղջերը կապելու և օրայները կաւան տեղը տանելու համար՝ միջին հաշուով 2 րուբլի կրնայ նստիլ։ Տասն պուղ սերմէն մերձաւորապէս 500 օրայ կը կազմուի, զորս կասելու համար 5 զոյգ եղ պէտք է՝ իւրաքանչիւրին 20 կոպէկ, 5 աղայ քշող՝ իւրաքանչիւրին 15 կոպ., և 5 աշխատաւոր՝ 25 կոպ. իւրաքանչիւրին․ ընդ աւելնն այդ գործողութեան բովանդակ ծախքն 4 րուբլի կը հասնի։ Իսկ հատելու յարդէն զատելու և տուն բերելու համար մերձաւորապէս 1 րուբլի կ'երթայ։ Ըստ այսմ տարուան մը մշակութեան բովանդակ ծախքն կը լինի իբրեւ 20 րուբլի և 60 կոպէկ։

Տասն պուղ սերմէն միջին հաշուով 60 պուղ կու տայ, պտղաբերութիւնը վեցպատիկ համարելով։ Այդ ենթադրելով որ պուղ մը ցորեան 50 կոպ. արժէ, բովանդակ ստացած ցորենը 30 րուբ. պիտի արժէ։ Եթէ այդ գումարէն հանենք ըրած ծախքը (20 րուբ. 60 կոպ.) կը տեսնենք որ բուն իրեն վաստակը կամ մուտքն է 9 րուբլի և 40 կոպէկ։ Բայց որովհետեւ գեղացի մը կարող է 50 պուղ ցորեն սերմանել, անոր համար իր յատուկ վաստակն այլ 47 րուբլի կը լինի․ մնալով իրեն մերձաւորապէս 5 րուբլիի ևս յարդ, որով ընդ աւելնն 52 րուբլի․ ուստի՝ համարելով տարուան մէջ 8 ամիս աշխատութեան, ամիս զուրկ 8¹/₂ րբլ. կ'իյնայ։ Բայց եթէ չհաշուենք գործաւորաց և այլոց համար ըրած ծախքը, գիտնալով որ գեղացին ինքն անձամբ կ'աշխատի և կը սերմանէ իր քաժնին մէջ, կը տեսնենք որ գեղացին միջակ պտղաբերութեան ժամանակ՝ իբր 1,400 քոկ. արշին երկրէ մը՝ 155 րուբ. կ'ընդունի տարին, որով ամիս զուրկ գրեթէ 13 րուբլի։ Դարձեալ պէտք չէ մոռնալ որ նա այդ

1. Սպասկինյ ագարակագէտն կ'ըսէ՝ Թէ Նախիջևանու աւանին լեռնային տեղեաց մէջ՝ մշակուած երկիրներուն կէսը կորդ թողուած է․ իսկ զնստագոյն մասին մէջ՝ իբր 1/2։ Տեղեկ. Երև. յ'էջ 4։

2. Հոս երկրի ծաւալը՝ զայն սերմանելու համար կարեւոր եզոց սերման քանակովն կը չափեն։

մուտքէն պիտի վճարէ հարկահանին (եթէ երկիրը հարկատու է) 20 րու-
80 կոպէկ , որ է իբր չորս երեսներորդ ($\frac{1}{50}$) բովանդակ իւր մուտքին :

Երկիրը կը մշակուի գոռքանով և ձուքով⁽¹⁾ : Յետինն հայերը վեցկի ևս կը կո-
չեն , որովհետև սովորաբար 3 զոյգ եղ կը լծեն գործելու համար : Տեղացի ա-
րորը՝ որ է բսել գութանը՝ դժուարագործածելի ծանր գործի մ'է , անոր համար
8-10 զոյգ եղ և գոմէշ կը լծեն . առոր առաջքը երկու անիւներու վրայ յե-
ցած է : Ամէն գեղացի գութան չի գործածեր , որովհետև գործածելու համար
հարկ կը լինի գոմէշներ պահել , որ մեծ ծախքի դուռ կը բանայ և բաւականի
ալ սուղ է (50-150 րուբլի) : Այս բանիս համար այժմ գրեթէ ամէն տեղ
գութանի տեղ ճուղք փոխանակած է , որ փայտեայ մեծ ճանկի ձև ունի՝
ծայրը երկաթեայ խոփ անցուած : Ճուղք՝ թէ դիրազին և թէ թեթեւ լի-
նելով՝ ներկայիս ամէն գեղացւոյ համար անհրաժեշտ գործի մը զարձեր է , մա-
նաւանդ լեռնային տեղերը՝ ուր գրեթէ անկարելի է գութանով հերկել : Ճու-
ղին մէջ մէկէն ինչուան երկու զոյգ եղ կը լծեն՝ ըստ կարծրութեան գետնոյն :
Սա ոչ հողը կը բարձրացընէ և ոչ կը շրջէ՝ ինչպէս գութանը , այլ միայն կը
պատռէ , անոր համար այսու հերկուած երկիրը՝ գրեթէ ոչ մէկ անգամ կար-
գաւորեալ բերք չի տար , թէ և երկրի մի և նոյն բաժինը՝ ասով տարին երկու
անգամ կը հերկեն . անգամ մը զարնան՝ ընդ երկայն , անգամ մ'այլ ամառը՝
ընդ լայն : Բաց ի ճուղքէ և գութանէ՝ երկրագործները կը գործածեն նաև ցա-
քան և տափ : Առաջինը՝ փայտեայ ատամներով քառակուսի գերանէ մը կը
կազմուի , իսկ երկրորդն ատփակ տախտակ մ'է , որով՝ յետ արտը անգամ մ'ու-
ռագելու՝ կը հարթեն զայն և հողակոշտերը կը փշրեն , զոյգ մը եղ միայն լծելով :
Բանջարանոցաց և պարտիզաց համար հօս տէրերը ուրիշ գործիներ ևս ունին .
յորոց մին է կեւարդիվար , որ է լայն գոգեալ թի մը՝ մեղեխով և երկու եր-
կաթեայ օղակներով , որք դրանէ թիակին զոգեալ կողերուն վրայ հաստատուած
են . այդ գործով ածու և ակօսներ կը բանան , սեխ , ձմերուկ , վարունգ , և այլն
տնկելու համար : Աշխատութիւնը հետեւեալ կերպով կը կատարուի . մարդ մը
այդ թին կը քաշէ՝ յիշեալ օղակաց վրայ կապած չուանոն , ուրիշ մ'ալ կ'ուզդէ
զայն՝ մեղեխը առ ի շեղ բռնելով և մերթ հողը յայտ և յայն կոյս թափելով .
ըստ այսմ ածուներուն ամէն կողմը հողը ակօսներով կը կտրատի՝ լայն երկզնե-
րու ձևով : Բանջարանոցի և պարտիզի գործեաց խմբին կը վերաբերին նաև՝
գերանդի , մանգաղ , բահ , բրիչ , թի և շատա (երկաթէ թիակ) : Վերջին չորս
գործիներովս բանջարանոցները կը փորեն :

Յորենը կատելու համար երկու տեսակ գործիք կը գործածուի , ձարձար և
կամ : Առաջինը կը կազմուի փայտեայ $2\frac{1}{2}$ բթաչափ տրամագծով լիսռէ մը՝ ու-
րոյ վրայ կոր գծով երկաթեայ փոքր թիակներ վարսուած են՝ լայն ծայրերնին
դէպ ի դուրս : Ճարճարը կը շարժեն զոյգ մը եղով կամ ձիով , և շարժելու մի-
ջոց կը զարձընեն ու նորէն կը զարձընեն սփռուած հաստերուն վրայ և կը ծեծեն

1. Արորը՝ հանդերձ ամենայն կազմածովք և քաշող կենդանիներով :

իւր սուր թիակներով: Երկրորդ կասման գործին կը բաղկանայ երկու տախտակներէ իրարու հետ ազուցուած, $1\frac{1}{2}$ արշին լայն. և $2\frac{1}{2}$ երկայն, որք զէպ ի մէկ կողմը կը նեղնան, այդ նեղ ծայրն՝ որ է ըսել առաջը՝ բաւական զէպ ի վեր կորած է, (առանց ցորենի հանկիւթելու՝ դիւրութեամբ վրայէն սահելու համար): Տախտակին հակադիր կողման վրայ վարտուած են զայլախաղեայ քարերու կտորներ: Զոյգ մը եզ կը քաշէ զայն կաշի մէջ տարածուած ցորենոյ վրայէն, իսկ տախտակին վրայ կը նստի տղայ (հօտաղ) մը, և եզները կը վարէ: Այս կասման նախաընդեղեղեան գործիներով յարզը մանր կը ջարդեն, և այս ջարդածն առանց ճարակ կը լինի. իսկ հատերն յարզէն կը զատեն երնելով փայտեայ երկվանեօք (հարաւ—արեւմտեան հողմի ժամանակ):

Այս կողմերուս հացային բոյսերն են՝ ցորեն, կորեակ, Զալտուկ (բրինձ) և Զաւար. իսկ իւղային բոյսեր՝ վուշ, Ասորեկ և չափաւոր քանակութեամբ Տգկանեփայտ⁽¹⁾ և կնճիթն: Բաց ի սոցանէ կը սերմանեն նաև Բամբակ և Տորոն: Հօս երեք տեսակ ցորեն կը գտնուի. ճերմակ, կարմիր՝ որ գիշիսոր կամ Ղարաբաղու ցորեն կը կոչուի և դեղին՝ որ է սարը պոռպտաց ըսուածը: Առնցմէ զատ մի քանի տեղ կը գտնուին նաև երկու ուրիշ տեսակներ այլ՝ գռնդիկ կամ քօփ—պաշ և գեարմեան: Ճերմակ ցորենն ու դեղինն՝ սոթային գօտւոյն մէջ կը սերմանին, իսկ գիւլիսորն՝ Դարալաղըզի լեռնային տեղեր: Գռնդիկը կ'որոշի իւր կարճ քառակիւնի՝ երեքմն և վեցանիւնի հասկովն: Հասկին իւրաքանչիւր կողմը 35—45 հատ կը հաշուի: Այս տեսակի ցորենս խիստ առատ կը պտղաբերէ, բայց անով շինուած հացն՝ մասնաւոր համեղութիւն մը չ'ունի: Գեարմեանն, որ՝ բնկաց ըսածին նայելով՝ Պարսկաստանի համանունն նահանգէն կը բերուի, կը տարբերի իւր քան զամէնն աւելի հաստ ու երկայն յարողովն՝ հանդերձ մեծ հասկովն, որ յինքեան 70—80 ճերմակ ու խոշոր հատ կը բովանդակէ: սոցն տեսակին ես միայն Մալիշկա և Սուլթան—բէկ գիւղերու մէջ հանդիպեցայ: Վերջերս երեցաւ ուրիշ տեսակ մ'այլ ցորենայ, որ հօս Հնդկաստանի ցորեն կը կոչուի. զոր փորձի համար Եարիմճա գիւղին մէջ սերմանեցին: Այս տեսակս ճիւղաւոր հասկ ունի և անկարծելի բարեբերութիւն մը՝ որով մինչև քրսան երեսուն կը պտղաբերէ⁽²⁾:

Գարւոյ երեք տեսակ կայ, յորոց մին երկկարգ հասկ ունի՝ և կիձի կը կոչուի, երկրորդն՝ քառակարգ, իսկ երրորդն՝ վեցկարգեան. երկու վերջիններուս տեղացիք քօփ—պաշ (գունա—գլուխ) անունը կու տան: Առաջին տեսակն զրեթէ վերցուած է՝ վատ պտղաբերութեանը համար. ընկհանրապէս զարին չափաւոր քանակութեամբ կը սերմանեն, և այն ևս ի կեր անասնոց: Հօս անպտղաբեր տարիներ ժողովուրդը զարեհաց կ'ուտէ, թխելով զայն զարւոյ ալիւրէ, և խառնելով հետը ցորենի կամ կորեկի ալիւր:

1873ին իմ հաւաքած տեղեկութեանցս համեմատ, այս երեք վիճակացս մէջ յիսնաքամայն հետեւեալ չափով ցորեն ու զարի ցանուեցաւ, ի Հայոց՝ 3,590.

1. Ումէ. Գենադէրէէկ:

2. Այդ է յերաւէ համբաւուած օրհնեալ ցորենն: Զէյդից

խալվար (խրաքանչիւր խալվարի 25 պուղ), ի թաթարաց 3,442 խալ., բոլորն 7,082 խալվար : Բերքը վեցպատիկ զնելով՝ ընդունուած է 42,192 խալ., որ կ'ընէ 1,054,800 պուղ : Այդ քանակութենէն՝ սերման և տնական պիտոյից համար գործածուեցաւ իբր 958,760 պուղ. հաշուելով 10 պուղ իւրաքանչիւր անձին վրայ, զեռ այդ շրջանի ամբարաց մէջ մնաց կամ արտաքոյ ի վաճառ տարուեցաւ 96,040 պուղ : Կորեկը մասնաւոր կերպով զփաղղ զիպուածնեւրու մէջ կը սերմանեն, ինչպէս օրինակ՝ երբ մարտիս կ'ինջնէ : Հողի հանգրտեան տարինեբու մէջ՝ ընտանի թռչնոց համար միայն կորեկ կը սերմանեն, բայց այն ևս այն մի քանի զիւղերու մէջ՝ յորս մասնաւոր ջրոյ կարօտութիւն չկայ :

Չալտուկ (բրինձ) սերմանելն զլիաւորապէս քանի մը զիւղորեից յատկացած է, ինչպէս Որդուատու բաժնին մէջ՝ Վերին և Ստորին Ազա, իսկ Դարալաղը՝ զի բաժնի մէջ Արփա, Վերին և Ստորին Տանձիք, Եպանի, Էրդէշ, Կըղզււլ՝ Ղըշլաղ, Դոյթուլ, Աշար և Մաքշկա զիւղերուն : Ասոց մէջ 1875ին հայր ցանեցին 158 պ. չալտուկ, թաթարք՝ 930 պ., բոլորն 1088 պ. : Այդչափ սերմը բերաւ իբր 13056 պ. արդիւնաբերութիւնը տասնաւոր զնելով : Չալտուկ սերմանելու համար, նախ հերկուած արտին վրայ կեարդի վարով 6 աշիւն լայնութեամբ և երկայնութեամբ քառակուսի ածուներ կը շինեն. ածուներն առաջ մէկ մը կ'ուղեւն և կը սկսին (ոսպով կամ ուրիշ բանով մը) կոխել, ապա մէջը սերմանիքը կը ցանեն, և կը շարունակեն նորէն կոխուել, մինչև որ սերմերը լաւ մը տղմով շաղախուին ու ծածկուին : Երբ առաջին բողբոջները կ'երևին, ածուներու մէջ ջուր կը թողուն, զոր մինչև հնձոց ժամանակ չեն կըտրեր : Այս ալ ըսենք, որ իւրաքանչիւր ածու երկու ծակ ունի՝ ջրոյ մտից և ելից համար. և որովհետև այդ ածուները շարուած են մի կամ երկու կարգի վրայ, ըստ այնմ ջուրն այլ մէկէն միւսին մէջ անցնելով՝ բովանդակ շարքը կը ծածկէ : Երկրագործը միանգամայն ալ կը ջանայ որ այդ ոռոգումը հաւասար կատարուի, վասն զի տղմի միջով ջրոյ թէ՛ զանպաղ և թէ՛ երազ ընթացքը՝ հաւասարապէս փնասակար է չալտուկի համար, որ իբր ճախնային բոյս՝ ջուր շատ կը սիրէ, բայց միանգամայն բարձր բարեխառնութիւն մ'այլ կը պահանջէ : Ընդհանրապէս չալտուկի մշակութիւնը շատ աշխատութիւն կ'ուզէ և յարատև վատտակ, և հետեւեալ հաշուէս կը տեսնուի՝ թէ ո՛րչափ ինչ զուտ շահ ունի անկէ գեղացին՝ եթէ իւր աշխատութիւնն այլ հաշուի առնուիք : — 3 պ. սերմն ցանելու մեծութեամբ արտ մը հերկելու համար 1 ր. ծախք պէտք է, իսկ 3 պ. սերմն կ'արծէ 1 ր. 50 կոպէկ : Յիշեալ ածուները շինելու և կոխուելու համար՝ 9 աշխատաւոր կարեւոր է և 8 եգ կամ զոմէշ : Եթէ իւրաքանչիւր աշխատաւորին 25 կ. տրուի՝ 2 ր. 25 կ. կը լինի. իսկ եղները վարձելու համար՝ պէտք է 1 ր. 20 կ., և 3 ր. 50 կոպէկ ևս հնձելու և կտաման համար : 3 պուղ սերմը միջակ բարեբերութեան ժամանակ՝ 40 պուղ բերք կու տայ, որ 20 բուբլի կ'արծէ՝ չալտուկի իւրաքանչիւր պուղն 50 կոպէկ համարելով : Այդ զուարէն պէտք է բառնալ բրած ծախքն (9 ր. 45 կ.) որով գեղացւոյն ցանած երեք պուղ սերմէն՝ 10 ր. 55 կոպէկ զուտ շահ կու գայ : Չալտուկն իւր կեղեներէն մաքրելու համար՝ հասարակ փայտեայ սանդ

մ'ունին՝ հանդերձ տոռամբն, որ մարդու կամ սովորաբար ջրոյ գորութեամբ շար-
ժելով՝ վերացած ու իջած միջոց անդադար միջի չախուկն հարուածելով կը կե-
ղեւ : Ստացուած մարդը չախուկն՝ որ անկէ վերջը բնդհանրապէս բրինձ կը կո-
չուի՝ իւր սակաւ քանակութեանն համար ուրիշ տեղ չի գրկուիր, այլ բոլորն ալ
տեղական պիտոյից համար կը սպառի :

Ձառար. — Այդ ծանօթ բոյսը՝ ըստ արտաքինոյն նման է այն ցորենին՝ ուս-
կից կորկոտ կը պատրաստեն : Հօս սակաւ քանակութեամբ ձառար կը սերմա-
նեն, միայն տնական գործածութեան համար :

Եղ հանելու համար կը սերմանուի՝ վաշ կամ կոտառաւ, Ասորեկ և Տգկա-
հաս, բայց խիստ չափաւոր քանակութեամբ : Ըստ որակութեան՝ ասորեկի⁽¹⁾
իւղն՝ թէ և գործածական ի կերակուրս, բայց շատ վար է քան զկոտառաւին :
Ասորեկը կը սերմանուի լեռնային գիւղերու մէջ, այն ևս շատ ժամանակ չկայ
որ սկսած են : Տգկահաս ցանելն գիւղական տնտեսութեան մասնաւոր գրա-
դանք մը չի կազմեր, այլ բանջարանոցին մէջ՝ այլևայլ բանջարաց հետ խառն
կը սերմանեն, որպէս զի նա իւր լայն տերեւոց ստուերաւ՝ միւս բոյսերը արեւուն
կիզիչ ճառագայթներէն պաշտպանէ : Տգկահասի իւղը՝ անոր սերմերն ճմլելով
կը հանեն, որ լուսաւորութեան կը ծառայէ : Այդ գործով կանայք կը զբաղին.
մեծ քարէ սալի վրայ կը սկսին այնչափ լեռուլ, փշրել ու մանրել տգկահասի
սերմերը՝ որ թան կը դառնան : Յետոյ այդ թանձը զանգուածն՝ օսնի մը մէջ
ջրով եռացընելով, անոր երեսը ելած զուտ իւղը՝ զրգալով մը զգուշութեամբ
ուրիշ անօթի մէջ կը հաւաքեն :

Կնձիթն այլ կը սերմանեն՝ առանց անկէ եղ հանելու, այլ խոյսկէս լոսեալ
պահոց կերակուրներու մէջ համեմի համար կը գործածուի :

Բամբակենի սերմանելը երբեմն տօթագին գօտւոյ բնակիչ գեղացւոյ մը առա-
ջին զբաղանքն համարուած էր. այլ այժմ՝ ջրոյ պակասութեան պատճառաւ՝ (որ
մեծաւ մասամբ պտղատու և այգիբեր պարտիզաց ոռոգման համար կը սպառի),
ամենաբիւր բան կը ցանեն : Հօս բաց ի տեղականէն՝ բամբակենւոյ ուրիշ տե-
տեսակներ ևս կը մշակուին, ինչպէս ամերիկեանն ու եգիպտականը : Վերջին
երկու տեսակներս ասկէց 15 տարի առաջ տարածուեցան և ժողովրդեանն ալ
լաւ ընդունելութիւն գտան, որովհետեւ բնիկ տեսակէն աւելի լաւ կը պտղաբե-
րեն և աւելի ալ երկար թէլեր ունին՝ մանաւանդ ամերիկեանն : Եգիպտական
տեսակն տեղացիէն դարձեալ այսու կը տարբերի, որ մանրաթէլքն սերմէն դիւ-
րաւ կը զատուին, մինչդեռ տեղացւոյներն այնպէս պինդ կցած են, որ զանոնք
զատելը՝ գեղացւոյն երկար ու յամրաշարժ աշխատութիւն մը կու տայ :

Բամբակենւոյ մշակութիւնն հետեւեալ կերպով կը կատարուի. սերմանողն յայտ

1. Ասորեկ կամ Սորեկը՝ ոմանք շոգգամի տեսակ մը կը համարին, իսկ հատուա-
ծիս հեղինակն ընդհակառակն կ'ըսէ՝ թէ կարմիր կամ կոճղիգաւոր ըսուած սուկն է
(*прижиге-оронге*), զոր այդ կողման ուրիշ լեռնային տեղեաց մէջ ևս կը սերմանեն՝
ինչպէս Նոր-Ռայապիդու աւանին մէջ՝ ըստ Ապասկեայ և Ախալցխէի աւանին մէջ՝
ըստ «*էյեզուկեայ*» ագարակագիտաց :

և յայն կոյս կը սփռէ արտի մէջ սերմերը՝ զորս նախ լաւ մը թաց մոխրի մէջ թրմած է⁽¹⁾։ Ընդհանրապէս բամբակի բնձիւղներն այնպէս անհաւատարապի կը լինին, որ զանոնք հոտելու մարքեղու համար պարմանելու ժամանակ՝ հարկ կը լինի աւելորդ թուփերը հանել։ Դեռ նոր բնձիւղքն չերկացած՝ յետ առաջին անգամ ոռոգելու՝ կը բերեն տափը և այնու արտը կը հարթեն և միջի հողակոշտքը կը փշրեն ։ Ամբողջ ամառը բամբակներն չորս անգամ կ'ոռոգեն և երեք անգամ ալ քաղհանք կ'ընեն։ Օգոստոսի վերջի օրերուն մէջ՝ բամբակներուց կոկոններն կը ճաթըռտին և ճերմակ բամբակը կը սկսի անոնցմէ դուրս ելլել։ Չհասունցած կոկոնքն յաճախ կը մնան բունոյ վրայ՝ մինչև յաջորդ աշունն։ Այս տեսակ կոկոնաց բամբակն բոլորովին լաւ տեսակ չը լինիր։ Բնիկ տեսակին կոկոններէն բամբակն հանելէն առաջ, կը մաքրեն մէջը գտնուած չոր տերևոց մասերէն, կոկոնաց միջի մանր թերթերէն, փռչիկն և յայլ անմաքրութեանց։ Այս բանիս համար կը զործածուի լապնառ, որ հաւկրթածէ՝ ուտենոյ ճիւղերով հիւսած՝ կողով մի է, որոյ երկու ծայրերն այլ ծակ ունին, որոց միջով կ'անցնի փայտեայ առանցք մը՝ ծնրաւոր մեղրեխով։ Այդ կողովը մէկ կողմին վրայ դնակներ ունի, ուսկից բամբակներու կոկոններ կը լեցընեն։ Ետոյ կողովըն պառկած դիրքով կը գնեն երկու յենարանաց վրայ, և այն ծնրաւոր մեղրեխով՝ որ առանցքին մէկ ծայրին վրայ հաստաւորուած է՝ կը սկսին պարձընել, որով բամբակին մէջ եղած բաներն կը ձեծուին, և ձեծուելով կամ կը փշրին և կամ կողովին ծակոտիքներէն դուրս կը թափին։ Այս գործողութենէս վերջը բամբակը բոլորովին կը մաքրուի մէջը գտնուած աղտերովիւններէն։ Ձըմեռուան գիշերները զեղացիներ կը սկսին բամբակը կոկոններէն դուրս հանել, իսկ գործաւորն ձեռքի ջահրակով բամբակը սերմէն կը զատէ, և այնպէս ի վաճառ կը դրուի։ Իսկ չեշերն կը զործածուին ի կեր անասնոց։ Վերջերս ստորագրած վիճակներէս սկսան 2000 բուրլէն աւելի նուազ քանակութեամբ բամբակ դուրս տանիլ։

Տորոնի մշակութեամբ կը զբաղին Խալխալ և Վայսիր գիւղոց բնակիչք։ Ասոնք շատ ժամանակ չկայ որ սկսան տորոնի մշակութիւնը՝ իբր փորձ, բայց ամենաչափաւոր քանակութեամբ։ Առաջին գիւղին մէջ՝ 1873 տարւոյն՝ չորս պուզի բաւական տեղ մը միայն մշակեցին, իսկ երկրորդին մէջ ինն պուզի։ Նմանապէս Եփեսիստի մշակութիւնն ևս տարածուած է այս վիճակաց մէջ՝ այլ ոչ ամէն տեղ։ Սորա մշակութեամբ զբաղող գիւղերու մէջ առաջին կը համարուին, Եարիմձա՝ Նախիջևանու բաժնոյն մէջ, և Տեսնիս՝ Որդուստու։ Առաջնոյն մէջ քթախոտ կը սերմանեն, իսկ միւսոյն մէջ ծխախոտ։ Եարիմձան տարին 100 պուզ պատրաստ քթախոտ կը բերէ, որոյ մի փունտն՝ ⁽²⁾ 30 կոպեկէն մինչև 1 բուրլի կրնայ արժել։ Լաւագոյն քթախոտ՝ մի քանի տարի պահուածը կը համարուի՝ որ թուիս—նարնջագոյն կը լինի։ Քթախոտ տնկելու համար միջակ մեծութեամբ ածուներ կը պատրաստեն, որոց երկու

1. Այդ թրման նպատակն է՝ սերմանիւր յերեքաց բաժնէլ, որը չոր եղած միջոց փոփոխակի իրար յարուելով՝ գունտերու կը վերածուին։—2 Էշիւ. ուտւ. = 1/80 պուզ.

կողմն այլ՝ քթախոտի փոքրիկ բողբոջները իրարմէ 4 բթաչափ հեռաւորութեամբ կը տնկեն, և այս կ'ընեն երբ առունները ջրով լեցուած լինին: Տընկելէ երկու երեք շաբաթ վերջը քթախոտի թփիկները կը խիտնան: Ետոյ ամբողջ ամառ ժամանակ՝ մինչև որ տերևներն հասունանան, ամէն շաբաթ թուփերը կը մաքրեն աւելորդ ձիւղերէն և ծաղիկները կը կտրեն, որով տերևոց ծաւալը աւելի ևս կ'ընդլայնի և օգոտտոսի կիսուն կը հասունանան: Երբ տերևոց ստորին երեոխն վրայ սկսին դեղին բծեր երևնալ՝ այն ատեն կը կրտրեն, տեսակները կը գտտեն և կը դիզեն: Ամէն օր այդ դէզը կը բանան ու կը դարձընեն, մինչև որ տերևները բողբոջի տեսան: Ետոյ զանոնք շուքի մէջ կը չորցընեն և ապա կ'աղան ձեռքի աղօրիով: Ըստ այսմ ահա կ'ունենան քթախոտի մանր փոշի՝ զոր կաշեայ պարկերու մէջ դրած կը պահեն խոնաւ տեղ, ինչպէս՝ մառանի մէջ: Իսկ ծխախոտի մշակութեամբ կը պարասի Տոնիս գիւղն, ուր ամէն տարի 200 պուգ ստորին տեղակ ծխախոտ կ'ելլէ՝ որոյ մէկ պուգն կ'արժէ 1 ր. 50 կոպեկէն մինչև 2 րուբլի: Նախիջևանու և Որդուստու վիճակաց ցած գիւղերու մէջ յաճախ կարելի է հանդիպել բաւական մեծութեամբ ծխախոտի տնկոց, որք բնակչաց զբաղանաց երկրորդական առարկայ են. և բերքը պարզ իրենց գործածութեան համար կը սպառեն: Իսկ վերջերս Հաճի—վար գիւղն այլ՝ ըստ օրինակի Եւրիմնայի և Տոնիսի՝ սկսաւ վաճառքի համար ևս մշակել: Միբձաւորապէս բոլոր վիճակներէս իբր 2,000 ր. գումարի ծխախոտ կ'երթայ ի վաճառ:

Մենդարար խոտերու մէջ առաջինն է Աւալաւ (luzerne), երկրորդ՝ Կորնգան, Շաւրալա և Քիւրիշնա՝ որք Արաշոյտի տեսակներ են. Աւալաւուն և Կորնգան՝ բազմամեայ բոյսք են, շատ ոռոգումն կը սիրեն և այնպիսի գետին՝ որ կամ կրային լինի կամ խիտ ճոխ ալքալեօք. անոր համար մոխրը անոնց իբր ամենալաւ պարարտացուցիչ կը ծառայէ: Ասոնք բոլոր ամառ ժամանակ երկու անգամ կը կտրուին և հազիւ երբեմն՝ նաեւ երրորդ անգամ, բայց այն ևս եթէ բաւական ոռոգուած լինի՝ Կորնգան կարծր ու թանձր խոտ մ'է՝ բայց խիտ սննդարար. իսկ Շաւրալան և Քիւրիշնան⁽¹⁾ միամեայ բոյսեր են, և կու տան պատենի մէջ փակուած ոսպնաչափ հատեր: Այդ հատերն խոտովը մէկտեղ՝ անասնոց ամենասննդարար ճարակ կը կազմեն: Ընթերցողաց ուշադրութեան արժանի կը համարիմ զՔիւրիշնան՝ որ միայն Հերհեր գիւղի մէջ կը մշակուի: Այս բոյսը հոն 1872ին հայ—գաղթականաց ձեռքով տարուած է Զանկեագլուրի կողմէն. սա 6—7 բթաչափ կը բարձրանայ, տերևքն ոսպան տերևոց կը նմանին և իւրաքանչիւր պատենին մէջ 3—4 հատ կու տայ, որք եղիպտացորենի հատերու կը նմանին, բայց մեծութեամբ անոնցմէ շատ փոքր, զօրս մանրելով անասնոց կու տան:

Շարռանակելի

1. Կը ցաւինք որ պր. Զէլինսկին չորկեց այդ բոյսերն՝ գոնեայ չորցած, այն ատեն կարելի էր անոնց բուսաբանական անուանքն որոշել: Զէյդիզ: